


ԿԱՐԴՈՒՍԵԱՆՅ ՎԱՆՔ ԲՍԻԱՅ

Այս հռչակաւոր վանաց կառուցումն
եղած է 'ի ձեռն Յովհաննու Կալէացոյ
Ա. Վիսպանգի՝ Միլանու դքսին, 'ի 1378,

յորում և թաղուած է ինքն՝ ամենա-
յարգի մարմարիոններով յօրինուած՝
անդրիազարդ գերեզմանի մը ներքոյ:



Այս վանաց շէնքին ամէն մասունքն յօ-
րինեալ են հրաշալի ճարտարապետու
թեամբ. մանաւանդ խաչաձև եկեղե-

ցին, զովժական արուեստիւ, որոյ ճա-
կատին մի թեւ կը ներկայացընէ այս
պատկերս: Եկեղեցւոյն մէջ դիտելու

արժանաւոր նիւթեր են, բայց 'ի զոնա-
զան յարգի աւարկաներէն, նաև չքնաղ
բարակ մարմարին քարերով գրուա-
գեալ որմունքն, սիւններն, յատակն, սե-
ղաններն, գոհարազարդ տապանն և կն-
սրբութեան, փայտեայ նրբաքանդակքն,

և այլն, և այլն: — Վանքին ընդարձակ
պարսպաց շրջապատին մէջ, յորում կը
գտնուին քանի մը գիւղեր, զերի ինկաւ
կարողաւ Հինգերորդի բանակին ձեռքն՝
փրանկիսկոս Առաջին՝ Գաղղիոյ թագա-
ւորն, 'ի 1535:

ՆՒՒ ԵՕՐՔԻ ՄԷՋ ԿԱՆԳՆՈՒԱՅ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԱՐՁԱՆՆ

Յաւիտեան 1876 Միացեալ Նահանգաց ազա-
տութեան հարկարամբայ տարեգարքին առթիւ
կատարուած հանգիսից ժամանակ, բազմա-
թիւ անհիմներէ ձեռացած գաղղիական-ամե-
րիկեան ընկերութիւն մի 'ի յիշատակ այն մեծ
պատմական անցից, որոշեցին Նիւ Եօքքի նա-
ւահանգստին մէջ կանգնելու արձան մը՝ որ
ներկայացընէ զՎրացոյցին յաւաւորի աշխար-
հի. և որ պիտի լինէր անմահ հակա կաթող մի
սիրոյ և խաղաղութեան երկու մեծամեծ հա-
տարակալեութեանց մէջ, այսինքն Գաղղիոյ
և Հիւսիսային Ամերիկայի:

Գործոյն կատարուեալ յանձնուեցաւ Պարթոլ-
տի արձանագործին, որ արդէն անմահացեր էր
Վիրիկեցիտորիքսի արձանովն: Յուլիսի 4ին,
որ է որ տնկախութեան Ամերիկացոց, աշխա-
տութիւնն աւարտու էր: Մեծագործ արձանն,
այսինքն միայն Ազատութեան աստուածուհոյն
պատկերն՝ 150 ոտնաչափ բարձրութիւն ունի.
ալ ձեռքը վեր բարձրացուցած՝ իսկ մը կը կրէ,
և ձախովն օրինաց տախտակներ բռնած է:
Ձախը սահմանուած էր, ինչպէս նաև 'ի գործ
գրուեցաւ՝ լուսաւորելու Նիւ Եօքքի նաւահան-
գիստը, և իր լոյսը կ'արձակէ հեռուէն ամբողջ
քաղաքներու և գաւառներու վրայ, համեմատ
ազատութեան գաղափարին, որով աշխարհ կը
լուսաւորուի: Արձանին երեք հինգերորդ մասն
երկաթէ կազմուած է, և մնացած երկու մասն
պղնձէ: Արձանն ձուլուած չէ, այլ կը բաղկա-
նայ 350 մասունքներէ: Վերջապատուելու յու-
լիսի չորսի տարեգարքին օրը, Պ. Լեսէքս, որ
գաղղ-ամերիկեան ընկերութեան նախագահ
ընտրուած էր 'ի Բարիզ, յանձնեց հանդիսապէս
արձանը Պ. Մարգընի, որ զայն ընդունելու հա-
մար ուղարկուած էր 'ի Գաղղիա: Սգոստոսի
5ին Նիւ Եօքքի մէջ կատարուեցաւ արձանին
պատուանդանին հիման առաջին վեմը դնելու

հանդէսն: Արձանին համար սահմանուած տեղն
է փոքրիկ կողմ մը, որ ամենաբիշ հեռաւորու-
թիւն ունի Նիւ-Եօքքի նաւահանգստէն: Հիւ-
ման առաջին քարն, որ միակտուր կրանիղէ
ահաւոր մեծութեամբ գանգուած մ'է, տեղւոյն
մօտ պատրաստ էր՝ ինչեցնելու համար համեմա-
տական մեծութեամբ ընդարձակ քառակուսի
փոսի մը վրայ, յորում պիտի ծածկէր նաև
պղնձեայ անօթ մը, որոյ մէջ դրուած էին յի-
շատակարաններ, մետաղներ, գրաւներ, Պար-
թոլտի լուսանկարն, օրագիրներ, և այլն:

Թերեւս քառասուն դար յետոյ էթէ երկրիս
աղետալի յեղափոխութիւն մը կ'ործանէ այն
վանքները կոթողը, այն աստեղուան երկրիս
բնակիչքն՝ գտնեն պիտի այն ծածկեալ նիւթե-
րը, և մտք յետագարծ մ'ընել տալով անցեալ
դարուց, պիտի կենակցին նոքա իննեւտասնե-
րորդ դարուս գաղղիական-ամերիկեան ընկե-
րութեան՝ իրենց ամենահին նախնեաց հետ:

Որմնադրաց գլխաւորն՝ յետ հիման քարը
հաստատուելուն՝ արծաթեայ ծնիւղով մը բու-
կիզքն սուաւ կ'ոյ գործածութեան. յետ որոյ
իւր տեղապահն խօսեցաւ ճարտարաւորան ճառ
մը՝ ցուցնելով որ այն արձանին կանգնումն կը
միացընէր երկու մեծամեծ ժողովուրդներ ա-
զատութեան գաղափարով, այսինքն զՎերի-
կացիս և զԳաղղիացիս: Իրեն պատասխանեց
նոյնպէս ճարտարաբանս երանուակա Նիւ Եօքքի
գաղղիական դեպիանն, յիշեցնելով ամերի-
կեան ազատութեան համար 'ի գործ գրուած
պատերազմական և զիցցողնական քաղաքիւն
ները, և թէ ինչպէս իրեն պաշտաման երկայն
տարիներուն մէջ բնաւ երեք փոքրիկ տարա-
ւայնութիւն մ'անգամ տիրած էր երկու տէ-
րութեանց մէջ, և ոչ վարկեան մի օրէնք և ի-
րաւունք տեղի սուած էին բռնութեանց:

